սում։ Մեր կարծիքով, հեղինակը ճիշտ փաստերին ոչ-ճիշտ մեկնաբանում է տալիս։ Սակայն, քանի որ այդ հարցը իրոք որ շատ բարդ հարց է և մի գրախոսականի սահմաններում անհնարին է դրան լիովին բավարար պատասխան տալ, մենք այդ խնդրին կանդրադառնանք առանձին հոդվածով։

3. Քննարկվող աշխատության հիմնական թերություններից մեկն էլ այն է, որ հեղինակը հետազոտության չի ենթարկել իր նյութի բաղադրամասը կազմող ջրային հարցը և հարաբերությունները արքունական հողատիրության շուրջը։

4. Գրքի թերություններից է և այն, որ հեղինակը իր տեսադաշտից դուրս է թողել այնպիսի կարևոր մի հանգամանք, ինչպիսին է Հայաստանի՝ ցարական կայսրության ծայրագավառներից մեկի, տնտեսական գաղութացման և այն Ռուսաստանի կենտրոնական արդյունաբերական շրջանների ագրարային կցորդը դարձնելու վրա։

5. Աշխատության մեջ հեղինակը, դժբախտաբար, չի անդրադարձել իր նյութի հետ անմիջականորեն առնչվող այնպիսի կարևոր հարցի վրա, ինչպիսին է գյուղում կապիտալիստական հարաբերությունների զարգացման պրոցեսը և դրա ազդեցության տակ գյուղական համայնքի բայքայումը, որը հատկապես աչքի էր ընկնում XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին։

6. Անվիճելի է, որ հողային հարցի անիծելի մասն է կազմում նաև հողերի կենտրոնացման հարցը։ Դեռ պրոֆ. Ս. Եղիազարյանը Անդրկովկասի համայնքին նվիրված իր աշխատության մեջ, հարևանցիորեն անդրադառնալով այդ հարցին, ցույց է տալիս, որ հենց Երևանի մոտիկ գյուղերից շատերում հողերի լավագույն մասը կենտրոնանում էր ունեոր տարրերի ձեռքում, հաճախ վերածվելով այդիների և անջատվելով համայնական դաշտերից։ Այդ նույն պրոցեսը նկատում են նաև Անդրկովկասի պետական գյուղացիների տնտեսական կյանքն ուսումնասիրողները։ Քննարկվող գրքում բերվող փաստական տվյալները իրավունք են տալիս կարծելու, որ մեր հեղինակը ի վիճակի կլիներ այդ բարդ, բայց շատ կարևոր հարցի վրա որոշ լույս սփռել։ Ցավում ենք, որ նա այդ բանը չի արել։ Ե. Ավդալբեգյանի աշխատության այդ բացը պայմանավորված է այն հիմնական թերությունով, որ նա իր հետազոտությունը սահմանափակում է կալվածատիրական հողերի շուրջը կատարվող հարաբերությունները պարզաբանելով, սահմանների մեջ թողնելով պետական հողերի շուրջը կատարվող հարաբերությունները, մինչդեռ այսպես կոչված պետական գյուղացիությունը կազմում էր գյուղական ողջ բնակչության 80 տոկոսից ավելին։

Չնայած վերոհիշյալ թերություններին, գրախոսվող աշխատությունը հիմնականում գրական երևույթ է մեր պատմական գրականության անդաստանում։

Մ. ՄԱՐԿՈՍՅԱՆ

Н. А. СМИРНОВ, *Политика России на Кавказе в XVI—XVIII вв.*, Издательство социально-экономической литературы, Москва. 1958, 243 стр., цена 9 руб. 65 к.

Ն. Ա. ՍՄԻՐՆՈՎ, *Ռուսաստանի քաղաքականությունը Կովկասում* XVI—XVIII *դդ.*. Սոցիալ-տնտեսական գրականության Հրատարակչություն, Մոսկվա, 1958, 243 էջ, գինը 9 ռ. 65 կ.։

Վերջին տարիներս հրապարակվեցին Սովետական Միության ժողովուրդների դարավոր բարեկամությունը, փոխադարձ կապերն ու հարաբերությունները լուսաբանող մի շարք ուսումնասիրություններ։ Այդ աշխատությունների թվին պետք է դասել նաև Մոսկվայի Պետական համալսարանի պրոֆեսոր Ն. Ա. Սմիրնովի գրախոսվող աշխատությունը։

Գիրքը ընդգրկում է հարցերի լայն շրջան։ Նա բաղկացած է ոչ մեծ նախաբանից և հետևյալ ինը գլուխներից. «Կովկասը XVI դ. և Կաբարդայի միացումը Ռուսաստանին. Իրանա-թուրքական մրցակցությունը Անդրկովկասում XVII դ. և Ռուսաստանի քաղաքականությունը. Ղրիմ-թուրքական ագրեսիայից կաբարդական ժողովրդի պաշտպանությունը Ռուսաստանի կողմից XVIII դ. առաջին կեսում. Հյուսիսային Կովկասը 1768—1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ. Ռուսաստանի քաղաքականությունը Կովկասում XVIII դ. երկրորդ կեսում. Հյուսիսային Կովկասը ռուս-թուրքական 1787—1789 թթ. պատերազմում չեչե

Մանսուրի ապստամբության շրջանում. Ռուսաստանի գաղութարարական քաղաքականությունը Կովկասում XIX դ. առաջին կեսում. Ժողովրդական շարժումները Կովկասում XIX դ. կեսերին. Հյուսիսային Կովկասը նախառեֆորմյան շրջանում»։

Գրքի բովանդակությունը, ինչպես տեսնում ենք, ավելի լայն ու հարուստ է, քան այդ մասին կարելի է դատել նրա վերնագրից։ Անհրաժեշտ է նշել, որ հեղինակը իր թեման շարադրում է համաշխարհային իրադարձությունների և միջազգային դիվանագիտական հարաբերությունների ընդհանուր ֆոնի վրա։

Աշխատության մեջ մեծ տեղ է հատկացված Կովկասի ժողովուրդների Ռուսաստանի հետ ունեցած բարեկամական հարաբերությունների ծագման ու զարգացման պատմությանը։ Հետաքրքիր տվյալներ են բերված Ռուսաստանի ու Կովկասի առևտրական ու քաղաքական հարաբերությունների, այդ երկրամասի ժողովուրդների ռուսական կողմնորոշման ձևավորման, ռուս և լեռնաբնակ ժողովուրդների համատեղ պայքարի մասին և այլն։

Հեղինակը հանգամանորեն քննարկում է նաև ցարական ինքնակալության ազգային-գաղութարարական քաղաքականությունը, մերկացնում է նրա էությունը, բնույթն ու զարգացման էտապները, նրա սոցիալ-տնտեսական, ռազմաքաղաքական նախադրյալներն ու հիմքերը։ Բայց սրա հետ մեկտեղ նա ցույց է տալիս և այն ագրեսիվ հափշտակողական քաղաքականությունը, որը դարեր շարունակ Կովկասում իրագործվել է Թուրքիայի, նրա վասալ Ղրիմի խանության, Իրանի և նրանց հետևում թաքնված Անգլիայի ու Ֆրանսիայի կողմից։ Գրքում բերված տվյալները մի անգամ ևս հերքում են արևմտաեվրոպական որոշ պատմաբանների պնդումն այն մասին, որ իբր Անգլիան ու Ֆրանսիան հեռու էին կանգնած «կովկասյան գործերից» և այդ երկրամասի հանդեպ ակտիվ քաղաքականություն չէին վարում։ Պրոֆ. Սմիրնովը բազմիցս նշում է այն անժխտելի փաստը, որ Եվրոպական այս երկու խոշոր գաղութարարական տերությունները XVIII և, մասնավորապես, XIX դարերում, ամեն կերպ աշխատում էին թուլացնել ցարական Ռուսաստանին և դուրս մղել նրան Կովկասից։ Հաջող կերպով նկարագրելով զանազան պետությունների մրցակցության պատկերը այդ երկրամասը տիրելու համար, հեղինակը գալիս է այն ճիշտ եզրակացության, թե Կովկասի հարցը դեռևս XVIII դարում միջազգային նշանակություն ստացավ։

Պրոֆ. Սմիրնովը նկարագրում է Ղրիմի խանության, Թուրքիայի և Իրանի կողմից դեպի Կովկաս ձեռնարկած բազմաթիվ ավերիչ արշավանքները։ Միաժամանակ նա խոսում է այն ծանր հետևանքների մասին, որ ունեցավ թուրքական փաշաների և պարսկական խանների տիրապետությունը Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի ժողովուրդների համար։ Ինչպես նշում է հեղինակը, օտարերկրյա այս կեղեքիչները Կովկասի իրենց կողմից գրաված շրջաններում հաստատում էին ռազմական օկուպացիայի դաժան ռեժիմ, ծանր հարկային ճնշում, ձեռք էին առնում տնտեսական և արտաքին տնտեսական հարկադրման ամենաբարբարոսական ձևերը, վարում էին չբոլշևիկված կողոպուտի ու թալանի, ֆեոդալական երկպառակությունների հրահրման, ազգային պառակտումների, կրոնական ֆանատիզմի քաղաքականություն և այլն։ Իսկ այս ամենը քայքայում էր քաղաքների ու գյուղերի արտադրողներին, խիստ կերպով արգելակում էր Կովկասի ժողովուրդների սոցիալ-տնտեսական ու կուլտուրական կյանքի զարգացումը։

Գրքի հեղինակը նոր փաստերի հիման վրա հաստատում է այն գիտական տեսակետը, թե Կովկասի միացումը Ռուսաստանին պատմական մեծ նշանակություն ունեցող առաջադիմական երևույթ էր։ Նա միանգամայն իրավացի է, երբ գրում է, որ անկախ ցարական կառավարության արտաքին քաղաքականության սուբյեկտիվ նպատակներից ու թելադրանքներից, չնայած նրա գաղութարարական բնույթին, այդ նշանակալից ակտը հսկայական գրական դեր խաղաց կովկասյան ժողովուրդների պատմական ճակատագրում։ Պատահական չէ, որ Կովկասի բոլոր առաջադեմ գործիչները, առաջավոր գրականության ու մշակույթի բոլոր անվանի ներկայացուցիչները ջերմորեն ողջունեցին իրենց երկրի միացումը Ռուսաստանին։

Կովկասի՝ Ռուսաստանին միանալու նշանակության մասին պարզ ու հստակ ասված է ՍՍՌՄ Գերագույն Սովետի, ՍՍՌՄ Մինիստրների Սովետի և ՍՄԿՊ ողջույնի խոսքում՝ ուղղված Կաբարդինա-Բալկարական ԱՍՍՌ-ի աշխատավորությանը, որը 1957 թ. հուլիսին տոնում էր Կաբարդայի Ռուսաստանին միանալու 400-ամյակը։ Այդ ողջույնի խոսքում մենք կարդում ենք. «Կաբարդայի միացումը Ռուսական պետությանը վճռական նշանակություն ունեցավ կաբարդինական, բալկարական և այլ ժողովուրդների պատմական ճակատագրում։ Նա ապահովեց այդ ժողովուրդների հետագա ազգային զարգացման հնարավորությունը, փրկեց նրանց օտարերկրյա զավթիչների կողմից ստրկացվելուց ու ոչնչացվելուց, բարեհաջող պայմաններ ստեղծեց ռուս ժողովրդի և մեր երկրի մյուս ժողովուրդների հետ տնտեսական ու կուլտուրական համագործակցության համար

(«Պրավդա», 6 հուլիսի, 1957)։ Պրոֆ. Սմիրնովը հենց այս գրությունների լույսի տակ է լուսաբանում իր ընտրած թեմայի հետ կապված պատմական երևույթները։

Գրախոսվող գրքի արժանիքներից մեկը պետք է համարել այն, որ նրանում լուսաբանվում է Հյուսիսային Կովկասի լեռնային ժողովուրդների սոցիալ-տնտեսական կյանքը։ Պետք է ասել, որ այս բարդ հարցը բիչ է ուսումնասիրված։ Պրոֆ. Սմիրնովը լուրջ փորձեր է կատարում այս ուղղությամբ։ Օգտագործելով բազմահարուստ նյութեր, նա ճիշտ եզրակացությունների է հանգում։ Չի կարելի, օրինակ, չհամաձայնել հեղինակի հետ, երբ նա գրում է. «Հյուսիսային Կովկասի ժողովուրդների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը XVIII դ. վերջում միատեսակ չէր։ Եթե կաբարդինացիների, մասամբ ավարցիների հասարակական կարգը կարելի է բնութագրել որպես ֆեոդալական, ապա լակերը, չեչենները, ինգուշները և լեռնային շրջաններում բնակված այլ ժողովուրդները ապրում էին դեռ նոր ստեղծվող ֆեոդալական հարաբերությունների պայմաններում, թեպետև նրանց մոտ արդեն տեղի էր ունենում հասարակական շերտավորում. ֆեոդալականացող ավագներին հակադրվում էր ընչազուրկ ազգականների ու արբեկների մասսան» (էջ 135)։

Պրոֆ. Սմիրնովը համոզիչ կերպով ցույց է տալիս, որ դեռևս XVIII դ. վերջին, Հյուսիսային Կովկասի լեռնային բնակչության մեջ դասակարգային հակասությունները սուր կերպարանք ստացան։ Բնորոշ է, որ այս շրջանում արդեն տեղի են ունենում տեղական իշխանների կողմից շահագործվող գյուղացիների մասսայական փախուստի դեպքեր։ Ռուսական կառավարությունը ամեն կերպ հովանավորում էր կովկասյան ֆեոդալներին, որի պատճառով էլ նրանց մեծ մասը կողմնորոշվում էր դեպի ցարական Ռուսաստան։

Հետաքրքիր են, մասնավորապես, գրքի այն գլուխները, որոնք նվիրված են Հյուսիսային Կովկասի լեռնցիների ժողովրդական շարժումներին։ Հեղինակը համեմատաբար մանրամասնորեն է կանգ առնում շեյխ Մանսուրի և իմամ Շամիլի գլխավորած ապստամբությունների վրա։ Համառոտ շարադրելով ժողովրդական շարժումների պատմությունը XVIII—XIX դարերում, պրոֆ. Սմիրնովը միաժամանակ բացատրում է նրանց սոցիալական արմատները, շարժիչ ուժերը, հակասական տենդենցները և այն հետադիմական նպատակները, որոնց հետամուտ էին այդ ապստամբությունների ղեկավարները։

Գրքում խոսվում է մյուրիդիզմի մասին, որը բնութագրվում է որպես «մարտնչող ֆեոդալիզմի և կղերական ավագանիի կրոնական-քաղաքական գաղափարախոսություն»։ Հեղինակը արդարացիորեն գրում է, որ ճնշելով ժողովուրդների ազգային ինքնագիտակցության որևէ արտահայտություն մյուրիդիզմը շարիաթի կրոնական օրենսդրության օգնությամբ արմատավորում էր ֆեոդալական իրավունքի նորմաները։ «Մյուրիդիզմը սրողում էր դասակարգային հակասությունները։ Լեռնցիների պայքարը սոցիալական ազատության համար, նրանց ազգային իրավունքների և տնտեսական շահերի համար մյուրիդիզմը փոխարինեց իսլամի հաղթանակի, կրոնական օրենքներին կյանքի լրիվ հնազանդեցման համար պայքարով, օրենքներ, որոնք փաստորեն անհամատեղելի էին ռեալ կյանքի պահանջների հետ» (էջ 213)։ Եզրակացությունը պարզ է. մյուրիդիզմը ռեակցիոն գաղափարախոսություն էր, նա լուրջ խոչընդոտ էր հանդիսանում լեռնային ժողովուրդների առաջադիմական զարգացման համար։

Աշխատության մեջ քննարկված են նաև այնպիսի հարցեր, ինչպես գյուղացիական ռեֆորմը և կապիտալիստական հարաբերությունների զարգացումը Հյուսիսային Կովկասում, Անգլիայի ու Գերմանիայի հասարակական քաղաքականությունը Մերձավոր ու Միջին Արևելքում XVIII—XIX դարերում և քննարկվող հիմնական խնդրի հետ կապված մի շարք այլ հարցեր։

Մի քանի դիտողություններ։ Կենտրոնացնելով իր ուշադրությունը Կաբարդայի պատմության մի քանի հարցերի վրա, հեղինակը համեմատաբար ավելի քիչ է կանգ առնում Կովկասի մյուս ժողովուրդների պատմության վրա։ Խոսելով ցարիզմի գաղութարարական քաղաքականության մասին, հեղինակը զարգացնում է այն միտքը (էջ 186—187), թե Կովկասում ցարական ադմինիստրացիայի ոչ բոլոր ներկայացուցիչներն են եղել կոպիտ ուժի և պատժիչ արշավախմբերի քաղաքականության կողմնակիցներ։ Եղել են և այնպիսիները, որոնք առաջ են քաշել երկրի խաղաղ տնտեսական ու կուլտուրական զարգացման առաջադեմ պլաններ։ Թեզը ճիշտ է, բայց այն հիմնավորելու համար, թվում է, թե պետք է բերվեր ոչ թե ցարիզմի ստրկամիտ ծառաներ գեներալ Գուդովիչի, ադմիրալ Մորդվինովի և ուրիշների օրինակը, այլ Ա. Ս. Գրիբոյեդովի և իր հայացքներով առաջադեմ չինովնիկ Զավիլեյսկու օրինակը, որոնք, ինչպես հայտնի է, կգամեցին Անդրկովկասի և ամբողջ Կովկասի տնտեսական վերափոխման նախագիծը, նախագիծ, որը երկար քննարկումներից հետո մերժվեց ցարական կառավարու-

թյան կողմից։ Բավարար չափով չի ցույց արված Անդրկովկասի ժողովուրդների ակտիվ մասնակցությունը XVIII և XIX դարերի ընթացքում տեղի ունեցած ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներին։ Ճիշտ չեն բացահայտված այն նկատառումները, որոնց հետևանքով XVIII դարի վերջերին Ղրիմի հայ բնակչությունը գաղթեցվեց Հյուսիսային Կովկաս։ Նշենք և հետևյալը. 1820-ական թվականների վերջին Անդրկովկաս գաղթած հայերի թիվը կազմում էր՝ Իրանից—40 հազար, իսկ Թուրքիայից՝ 90 հազար մարդ։ Մինչդեռ, գրախոսվող գրքում (էջ 189) բերվում են այլ թվեր։

Պրոֆ. Ն. Ա. Ամիրեանովի աշխատությունը գրված է գրական ու արխիվային հարուստ նյութի հիման վրա։ Նա ճիշտ կերպով է լուսաբանում Կովկասի ժողովուրդների պատմության, ցարական Ռուսաստանի արտաքին քաղաքականության և ռուս ու կովկասյան ժողովուրդների բազմադարյան բարեկամական հարաբերությունների շատ էջեր։ Այս գիրքը անկասկած հետաքրքիր և օգտակար աշխատություն է։ Պետք է ցավել, սակայն, որ նա լույս է ընծայված փոքր տպաքանակով (3000 օրինակ)։

Ն. ԳԵՂԱՄՅԱՆ